2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

1.Նշված ժամանակահատվածում համայնքապետարանի փաստաշրջանառությունը հազմել է՝
Մտից գրություններ-6051 հատ
Դիմումներ-2356 հատ
Ելից գրություններ-4032 հատ
2.Ընդունվել է-3245 հատ իրավական ակտեր՝
Համայնքի ղեկավարի որոշումներ-2517 հատ
Համայնքի ղեկավարի կարգադրություններ-401 հատ
Աշխատակազմի քարտուղարի հրամաններ-327 հատ
Կազմակերպվել է ավագանու-11-նիստերի նախապատրաստական աշխատանքներ
Ընդունվել է ավագանու-212 հատ որոշում
Վերոնշյալ իրավական ակտերի համար կատարվել են գրանցում, հաշվառում, համարակալում կնքված հատուկ մատյաններում
3.Իրականացվել է-560-քաղաքացիների ընդունելություն
Քաղաքացիների տրամադրվել է-2915 հատ-տեղեկանք և պահանջվող փաստաթղթեր
4.Կազմակերպվել է աշխատակազմի և ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող-8-մրցույթի նախապատրաստական աշխատանքներ, կազմվել են հարցաշարեր:
5.Գույքի կառավարման ոլորտում կատարվել է հետևյալ աշխատանքները
ա/ կատարվել է համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2025թ ամենամյա գույքագրում
բ/ կատարվել է համայնքի բնակավայրերի, ՀՈԱԿ-ների, համայնքային հիմնարկերի գույքի հանձնում -ընդունում
գ/ իրականացվել է համայնքապետարանի, ՀՈԱԿ-ների, համայնքային հիմնարկերի սեփականության իրավունքով պատկանող ոչ պիտանի գույքի դուրս գրման աշխատանքներ
ե/ ավագանու նիստերին ներկայացվել է գույքի կառավարման ոլորտի հետ կապված հարցեր ր նախագծեր:
6. Կատարվել է 2019թ ներառյալ առաջացած, գործավարությամբ ավարտված համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պեական սեփականության:
7. Քաղաքացիական պաշտպանության բնագավառում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝
ա/ կազմվել է աղետների ռիսկերի կառավարման պլանը
բ/ճշտվել է քաղաքացիական պաշտպանության պլանը և իրականացվել վարժանք
գ/պարբերաբար բնակավայրերում անցկացվել է դասընթաց՝ օդային տագնապի վերաբերյալ էլեկտրական շչակի կիրառմամբ
դ/գույքագրվել են նկուղները և ապաստարանները:
8.Վարվում է օրենքով սահմանված կարգով համայնքի զինապարտների գրանցամատյանը:
Կատարվել են զինկոմիսարիատից տրվող ծանուցումները համապատասխան անձանց տրամադրելու աշխատանքներ
9. Հաշվետու տարում սկսել ենք Թվայնացնել ինչպես աշխատանքային պայմանագրերի կնքումը, այնպես էլ անձնական գործերի վարումը:

Բնակչության մասնակցությունը՝ Տեղական ինքնակառավարմանը

Համայնքի բնակիչների համար ստեղծվել է բավարար պայմաններ՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին տեղեկացված լինելու համար և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը:

Համայնքի ավագանու բոլոր նիստերը ուղիղ եթերով հեռարձակվել են Թալինի համայնքապետարանի պաշտոնական և ֆեյսբուքյան էջերում: Ավագանու, համայնքի ղեկավարի որոշումները թափանցիկության սկզբունքով տեղադրվել են համայնքապետարանի պաշտոնական էջում:

Թալինի համայնքապետարանի պաշտոնական կայք https://talin.am

Թալինի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեներ
talinihamaynqapetaran@list.ru
thamaynqapetaran@gmail.com

Պաշտոնական ֆեյսբուքյան էջ https://www.facebook.com/talini1qaxaqapetaran
Հեռախոսահամար **060 75 77 87, 060-88-80-08**

Առևտրի և ծառայությունների բնագավառ

1. Ոգելից խմիչք և ծխախոտ - 241 թույլտվություն,
2. Տեխնիկական հեղուկներ - 11 թույլտվություն,
3. 24:00-ից հետո - 1 թույլտվություն,
4. Հեղուկ վառելիք - 15 թույլտվություն,
5. Արտաքին գովազդ - 74 թույլտվություն,
6. Թանկարժեք մետաղներ - 2 թույլտվություն,
7. Հանրային սնունդ - 33 թույլտվություն,
8. Հոգեհանգիստ և ծիսակատարություն - 1 թույլտվություն, թույլտվություն

Պաշտպանության կազմակերպման բնագավառ

Օրենքով սահմանված կարգով և այլ իրավական ակտերով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները, որոնք ներկայացվում են տարածքային զինկոմիսարիատ: Ռազմական դրության պայմաններում իրականացվել են համապատասխան միջոցառումներ՝ զինկոմիսարիատից տրվող ծանուցագրերը համապատասխան անձանց ծանուցելու համար:

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառ

Համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել են միջոցառումներ՝ կազմվել է աղետների ռիսկերի նվազեցման պլան և ճշգրտվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը:

Թալինի ԱԻՆ տարածքային ստորաբաժանման հետ անցկացվել է համատեղ վարժանքներ:

Գույքագրվել են համայնքում առկա նկուղները և ապաստարանները, իրականացվել է համապատասխան ամրագրում «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում բնակչությանը թաքստոցներով ապահովելու համար: Համայնքում տեղադրվել է 5 նոր շչակ:

Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առեվտրի, սպասարկման և գովազդի բաժին

I. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Ընդհանուր գումար

107 000 000 ՀՀ դրամ

Մանրամասներ

Կնքվել են պայմանագրեր

- Մեծ ֆուտբոլի դաշտի կառուցում (GIZ) – **18 000 000 ՀՀ դրամ**
- Բիզնես աջակցության կենտրոն (GIZ) – **20 000 000 ՀՀ դրամ**
- Վերականգնվող էներգետիկա (ՄԱԿ ԶԾ) – **60 000 000 ՀՀ դրամ**

Մանրամասներ

- Ներքին Սասնաշեն – 30 կՎտ արևային կայան + էլեկտրական կաթսա – **8 783 000 ՀՀ դրամ**
    - գոյացած բնապահպանական վճար – **5 000 000 ՀՀ դրամ**
- Ամֆիթատրոնի կառուցում (ՄԱԿ ՓԳՀ / Ակցիա սովի դեմ) – **9 000 000 ՀՀ դրամ**

II. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

Ընդհանուր գումար

112 700 000 ՀՀ դրամ

Մանրամասներ

2025 թվականի մասնակցային բյուջետավորման ծրագիր

Ծրագրի բյուջե – **52 700 000 ՀՀ դրամ**

III. ԹՎԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ (ԹՎԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ)

- Urban հարթակով ներկայացված դիմումներ – **118**
- Կազմված շինթույլտվություններ – **48**
- Ավարտական ակտեր – **5**
- Մոնիթորինգ և հաշվառում – ✔
- Google Maps-ում ավելացված տվյալներ – փողոցներ, օբյեկտներ, զբոսաշրջային վայրեր

IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

- Տեղեկատվական տեսանյութեր – **183**
- Բաժնի կողմից պատրաստված տեսանյութեր – **37**
- Facebook և TikTok էջերի կառավարում
- Օնլայն հարցումներ / վիկտորինաներ – **8**
- Հանդիպումներ բնակիչների, ՀԿ-ների, դպրոցների հետ

V. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

- Զբոսաշրջային գրանցամատյան – կազմված
- «Թալինի անձնագիր» – մշակված
- Գովազդային վահանակների միասնական ձևավորում – AI էսքիզներ
- Մանկական զբոսայգու գունազարդում – իրականացված

VI. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Վերապատրաստման դասընթացներ

Բաժնի աշխատակիցները մասնակցել են մի շարք վերապատրաստումների՝ հետևյալ ուղղություններով.

- **Քաղաքապետերի դաշնագիր (Covenant of Mayors)**
- **Մասնակցային բյուջետավորում**
- **Քաղաքացիակենտրոն ծառայությունների նախագծում**
- **Մարդակենտրոն ծառայությունների զարգացում**
- **Ապակենտրոնացում և լավ կառավարում**

Ուսումնական այց

- Ուսումնական այց՝ **Չեխիայի Հանրապետություն**
- Քաղաք – **Բռնո**
- Նպատակ.
    - տեղական ինքնակառավարման արդյունավետ մոդելների ուսումնասիրություն
    - քաղաքացիակենտրոն ծառայությունների գործնական փորձի փոխանակում
    - մասնակցային կառավարման և լավ կառավարման մեխանիզմների ճանաչում

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ (ՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ՀԱՄԱՅՆՔ) ԾՐԱԳՐԵՐ

Ընդհանուր գումար

3 461 714 593 ՀՀ դրամ

Մանրամասներ ըստ ոլորտների

1. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Թալին, Թաթուլ, Պարտիզակ, Արտենի, Ակունք, Աշնակ, Արագածավան և Վերին Սասնաշեն բնակավայրերում ասֆալտապատման աշխատանքներ

- Ընդհանուր՝ **1 327 004 800 ՀՀ դրամ**

    - Համայնք՝ 796 202 880 **ՀՀ դրամ**
    - Պետություն՝ 530 801 920 **ՀՀ դրամ**

- Երկարություն՝ **5 356 մ**
- Երթևեկելի մասեր՝ **36 758**
- Իջատեղի՝ **17 985**
- Մայթ՝ **8 506.1**

2. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կարմրաշեն, Ոսկեթաս, Զովասար, Գառնահովիտ, Թալին, Արագածավան, Մաստարա, Ներքին Բազմաբերդ բնակավայրերում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքներ

- Ընդհանուր՝ **95 736 920 ՀՀ դրամ**

    - Համայնք՝ 38 294 768 **ՀՀ դրամ**
    - Պետություն՝ 57 442 152 **ՀՀ դրամ**

- Հզորություն՝ **372.9 կՎտ**

3. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կարմրաշեն, Ոսկեթաս, Զովասար, Վերին Սասնաշեն, Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ և Շղարշիկ բնակավայրերում գազաֆիկացման աշխատանքներ

- Ընդհանուր՝ **619 685 147 ՀՀ դրամ**

    - Համայնք՝ 247 874 059 **ՀՀ դրամ**
    - Պետություն՝ 371 811 088 **ՀՀ դրամ**

- Գազատար՝ **26 844 մ**

4. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Զարինջա, Կարմրաշեն, Ոսկեթաս, Զովասար, Ցամաքասար, Ներքին Սասնաշեն, բնակավայրերում խմելաջրի ցանցերի հիմնանորոգման, Շղարշիկ բնակավայրում օրվա կարգավորիչ ջրամբարի, Ներքին Բազմաբերդ բնակավայրը սնուցող ջրատարի կառուցման աշխատանքներ

- Ընդհանուր՝ **501 153 260 ՀՀ դրամ**

    - Համայնք՝ 125 288 315 **ՀՀ դրամ**
    - Պետություն՝ 375 864 945 **ՀՀ դրամ**

- Ցանց՝ **25 251 մ**

5. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Մաստարա,Ներքին Բազմաբերդ, Գետափ, Իրինդ բնակավայրերում ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքներ

- Ընդհանուր՝ **619 389 100 ՀՀ դրամ**

    - Համայնք՝ 216 786 185 **ՀՀ դրամ**

- Պետություն՝ 402 602 915 **ՀՀ դրամ**

- Ցանց՝ **13 373 մ**

Քաղաքաշինության և հողաշինության բաժին

Բաժինը 2025 թվականի ընթացքում, ըստ աշխատանքային ծրագրի, շարունակում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. **Հողաշինության ոլորտ**
   - Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակի միջոցով կատարվել է թվով 416 անշարժ գույքերի նկատմամբ իրավունքի պետական գրանցում:
   - Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակի միջոցով կտարվել է՝
     - այլ տեղեկատվության տրամադրման,
     - անշարժ գույքի հասցեի գրացման,
     - անվանափոխման վերաբերյալ գրառման կատարման,
     - գույքի նկատմամբ գրանցված իրավունքների առկայության վերաբերյալ,
     - իրավունքի դադարման պետական գրացման,
     - կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման,
     - կցում գործին,
     - միասնական տեղեկանքի տրամադրման,
     - նոր վկայականի տրամադրման,
     - սխալների ուղղման,
     - վրիպակի ուղղման,
     - փաստաթղթերի պատճենների տրամադրման
     - քարտեզագրական նյութերի տեղեկատվության տրամադրման վերաբերյալ դիմումների մուտքագրում:
   - Կազմվել է թվով 34 համայնքի ավագանու որոշման նախագիծ:
   - Հայտարարվել, կազմակերպվել և անցկացվել են թվով 32 անշարժ գույքերի ու 3 շարժական գույքերի աճուրդ-վաճառք, թվով 24 անշարժ գույքերի վարձակալության մրցույթ, որոնց բոլորի վերաբերյալ նոտարական գրասենյակում կնքվել են համապատասխան պայմանագրեր:
   - Օրենքով սահմանված կարգով փոխվել է թվով 14 հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները:
2. **Քաղաքաշինություն**
   - Կառուցապատման թույլտվությունների միասնական համակարգ հարթակի միջոցով ստացվել է թվով 850 դիմում՝
     - նախագծման թույլտվության,
     - շինարարության թույլտվության,
     - հետագիծ-նախագծային փաստաթղթերի համաձայնեցման,
     - 2-5 տեղեկանքների,
     - թվայնացման,
     - ընդունող հանձնաժողովի ակտերի,
     - ավարտական ակտերի,

    - նախագծային փաստաթղթերի և
    - ժամկետների երկարաձգման վերաբերյալ:
  - Օրենքով սահմանված ընթացակարգով տրվել է՝
    - թվով 150 ճարտարապետահատակագծային առաջադրանք,
    - թվով 166 շինարարության թույլտվություն,
    - թվով 30 հետագիծ-նախագծային փաստաթղթերի համաձայնեցում և շինարարության թույլտվության տրամադրում,
    - թվով 13 ավարտական ակտեր (շահագործման թույլտվություն):
  - 29 դեկտեմբեր 2005 թվականի թիվ 2404-Ն որոշման պահանջներին համապատասխան կազմվել և լիազոր մարմնին է ներկայացվել թվով 20 քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթներ:
3. **Այլ գործեր**
  - Talin.am հարթակի միջոցով ստացվել է թվով 582 հանձնարարականներ, որոնք բոլորը կատարվել են սահմանված ժամկետներում:
  - Տրվել է թվով 223 ընդհանուր բնույթի տեղեկանքներ:
  - Տրամադրվել է թվով 558 քաղվածքներ՝ գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի հիման վրա:
  - Քաղաքացիների դիմումների հիման վրա տրվել է թվով 96 հստատված հատակագծեր մատակարար կազմակերպություններին ներկայացնելու համար:
  - Կազմվել է համայնքի ղեկավարի՝
    - հասցեի որոշման թվով 485,
    - հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ թվով 170,
    - ինքնակամների օրինականացման վերաբերյալ թվով 20,
    - վարձակալության իրավունքը դադարեցնելու վերաբերյալ թվով 18 որոշման նախագծեր:
  - Բաժնի մասնագետների կողմից կատարվել է մշտադիտարկում Թալինի համայնքապետարանի կողմից կատարվող շինարարական աշխատանքների իրականացման վայրերում, արձանագրված թերությունների վերաբերյալ տրվել են համապատասխան ցուցումներ թերությունները վերացնելու ուղղությամբ:
  - Բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից կատարվել են մշտադիտարկում Թալին համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը ըստ նշանակության օգտագործելու վերաբերյալ և խախտումներ հայտնաբերելու դեպքում կազմվել են համապատասխան արձանագրություններ:
  - Բաժնի մասնագետներն ամենօրյա ռեժիմով կազմակերպում են քաղաքացիների ընդունելիություն բաժնում՝ մասնագիտական խորհրդատվության և ոլորտին վերաբերվող տարբեր հարցերի պարզաբանման նպատակով:

Ըստ բնակավայրերի իրականացված աշխատանքներ՝

Թալին

- Ավտոկայարանի և հարակից շուկայի տարածքի ասֆալտապատում

- Խանջյան 17 հասցեի բազմաբնակարան շենքում տանիքի վերանորոգման աշխատանքներ
- Միրոյան 6 հասցեի բազմաբնակարան շենքում տանիքի հիմնանորգման աշխատանքներ
- Մյասնիկյան հասցեում մայթերի հիմնանորոգման աշխատանքներ
- Թալին/«Ժեստ» հոգեբանական կենտրոնի հիմնանորոգման աշխատանքներ
- Թիվ 3 մանկապարտեզի տանիքին ջրատաքացուցիչների տեղադրում
- Խանջյան փողոցում և Շահումյան 4 հասցեում տարածքի բարեկարգման աշխատանքներ
- Շահումյան փողոցի հարակից բազմաբնակարան շենքերի տարածքում կառուցված մինի ֆուտբոլի դաշտի հիմնանորոգում
- «Թալինի մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ը համալրվել է ձայնային տեխնիկայի նոր մեծ քանակությամբ
- Խանջյան 8 և Խանջյան 28 հասցեներում, բազմաբնակարան շենքերի հատվածում ցանկապատերի տեղադրում
- Երաժշտական դպրոցը հագեցվել է նոր գույքով
- Թալին քաղաքի մուտքում եղևնիների տնկում
- Թիվ 3 մանկապարտեզի գույքը հագեցվել է նոր սառնարանով
- «Թալինի համայնքային մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ը համալրվել է նոր թվային դաշնամուրով
- «Թալինի համայնքային մարզական կենտրոն» ՀՈԱԿ-ը հագեցվել է նոր գույքով
- Մյասնիկյան 3, Քոթանյան 11, Սպանդարյան 11, Տերյան 24/1, 24/2, Մեխանիզատորներ և Խանջյան 20 հասցեների բազմաբնակարան շենքերի դռների փոխարինում նորերով

Գառնահովիտ

- 40 մ ոռոգման համակարգի կառուցում
- Դեպի գերեզմանատուն տանող խմելաջրի ջրագծի անցկացում 200 մ երկարությամբ
- Գերեզմանատան ցանկապատում 600 մ երկարությամբ, 200 հենասյունի տեղադրում
- Վարչական ղեկավարի նստավայրի շենքի ներքին հարդարման աշխատանքներ
- Գազաֆիկացման աշխատանքներ
- Արևային կայանի տեղադրման աշխատանքներ
- Սրբավայրի հարակից տարածքում տաղավարի կառուցման և 100 մ ջրագծի անցկացման աշխատանքներ

Կարմրաշեն

- Խմելաջրի ջրագծի նոր խողովակաշարի տեղադրում՝ բաժանարար հանգույցներով
- Գազի 4200 մ ներքին ցանցի անցկացում
- 25 անձի համար նախատեսված զրուցարանի կառուցում
- Պուրակի մասնակի կառուցում՝ 75 մ երկաթյա ճաղավանդակի կառուցում, կանաչապատում

Եղնիկ

- 57 ք/մ խաղասրահի վերանորոգում՝ սալիկապատում, առաստաղի վերանորոգում, պատերի հարթեցում և ներկում, գույքի /սեղան,աթոռ/ ձեռքբերում

Ակունք

- Ճանապարհների փոսալցում և հարթեցում 2,5 կմ դաշտամիջյան և 1,8 կմ ներհամայնքային
- Գազաֆիկացման ցանցի ավելացում /250 մ /

- Լուսավորության ցանցի 8 հենասյուների և լեդ լամպերի տեղադրում
- Խմելաջրի ցանցի անցկացում 100մ / 32 դյույմ / , 350մ / 63 դյույմ /
- Ջրամատակարարման համակարգի ջրատարի ինժիներագեոդեզիական հետազոտական աշխատանքների իրականացում, 5 օդահանների տեղադրում , 50 մ / 75 դյույմ / վնասված հատվածի փոխարինում նորով
- Մշակույթի տան կարիքների համար 3 կոնդիցիոների , 4 սեղանի , 20 աթոռի ձեռք բերում

Զովասար

- 38 ջրահեռացման վակերի տեղադրում
- 1 տաղավարի կառուցում և տեղադրում
- Գազի 2970 մ ներքին ցանցի կառուցում
- Ջրի 3990 մ ներքին ցանցի կառուցում

Ագարակավան

- Տաղավարի կառուցում
- ՕԿՋ-ի կառուցում և 2300մ խմելաջրի ներքին ցանցի հիմնանորոգում

Թաթուլ

- 180 մ գազի գծի կառուցում
- Մշակույթի տան հարևանությամբ՝ 902.48 քառակուսի մետր մակերեսով պուրակի կառուցում, հողային աշխատանքներ, սալիկապատում, ցայտաղբյուրի տեղադրում, հուշապատի կառուցում, ցանկապատի կառուցում և վեանորոգում, ջրի տարայի տեղադրում, ջրագծի կառուցում
- 4 աղբամանների տեղադրում
- Սելավներից քանդված փողոցների ավազալցում՝ մոտ 1 կմ

Ցամաքասար

- 3 փոքր աղբամանների տեղադրում
- մինի ֆոտբոլի դաշտի հենասյուների ու ցանքապատի կառուցում

Կաթնաղբյուր

- Գյուղամիջյան ցայտաղբյուրի փոխարինում 1 հատ
- Մշակույթի տան բակի ցայտաղբյուրի փոխարինում նորով
- Ոռոգման ցանցի 400 մետր հատվածի անցկացում՝ 160 մմ պլաստմասե խողովակների տեղակայմամբ
- Խմելաջրի ցանցի վերանորոգում 550 մ՝ հին երկաթյա խողովակների փոխարինում 63 մմ պլաստմասե խողովակներով
- Խմելաջրի 4 բաժանարարների պատրաստում և տեղադրում
- Ֆուտբոլի դաշտի 12 կետի լուսավորության անցկացում
- Բնակավայրի մեկ փողոցի լուսավորության անցկացում՝ 7 կետի կառուցմամբ

Սուսեր

- 4 մեծ աղբամանների տեղադրում
- Դաշտամիջյան տնակի կառուցում՝ հովիվների համար նախատեսված

Կաքավաձոր

- Վարչական շենքի մեկ սանհանգույցի կառուցում

- Բուժկետի սենյակի վերանորոգում
- Մանկապարտեզի կառուցումը ընթացքի մեջ է
- Խմելու ջրի ցանցի հիմնանորոգում մասամբ

Մաստարա

- 120 մեծ, 6 փոքր աղբամանների տեղադրում
- Հուշարձանի տարածքի բարեկարգում, մանրահատակի տեղադրում
- Խմելաջրի ցանցի կառուցում 1200 մ երկարությամբ
- Գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում՝ փոսալցում, հարթեցում
- Մանկապարտեզի 2 դռների տեղադրում
- Ոռոգման ներքին ցանցի 100 մետր հատվածի անցկացում, երկաթյա կիսախողովակների տեղադրում, ջրթողների պատրաստում
- 3 դիտահորերի կառուցում

Արագածավան

- 15 մեծ աղբամանների տեղադրում
- Հոկտեմբերյան խճուղի թիվ 2 և 4 շենքերի տանիքների ծածկի փոխարինում նորով, տանիքի փայտե կարկասի փոխարինում, ջրհորդանների և ջրատար խողովակների փոխարինում
- «Պեռլիտ» թաղամասի 118 գծմ երկարությամբ կոյուղագծի խողովակների փոխարինում՝ նոր, ավելի մեծ տրամաչափի խողովակներով
- Արցախյան 44-օրյա պատերազմին նվիրված պանթեոնի եզրաքարերի տեղադրում
- Նոր աղբավայրի տարածքի հողի փորում, հարթեցում
- Արագածավանի թիվ 3 մանկապարտեզի մեկ հարկանի կորպուսի և միջանցքի վերանորոգում
- Մշակույթի տան տանիքին արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում
- Մանկապարտեզի տանիքին արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում
- Երաժշտական դպրոցի մի քանի սենյակների և միջանցքի վերանորոգում
- Կայարանամերձ թաղամասի մոտ 50 գծմ կոյուղու խողովակների փոխարինում
- 140 քմ փոսալցման աշխատանքներ
- Ասֆալտապատ փողոցների գծանշում
- 35 քմ կայարանի կառամատույցի բետոնապատման աշխատանքներ
- Մինի ֆուտբոլի դաշտի թվով 3 արտաքին լուսավորության տեղադրում

Ոսկեթաս

- 75 տեղ հզորությամբ նոր մանկապարտեզի կառուցում
- 3800 մ խմելաջրի ներքին ցանցի հիմնանորոգում
- 2900 մ գազի ներքին ցանցի կառուցում
- Հանդիսությունների սրահի մասնակի վերանորոգում՝ օդորակիչների տեղադրում ներքին հարդարում
- Փողոցային լուսավորության 9 կետի ավելացում

Գետափ

- 2 մեծ աղբամանների տեղադրում
- Դաշտամիջյան ճանապարհների փոսալցում, հարթեցում (400 x 5) մ 2000 քմ
- Երկաթուղային կառամատույցի՝ բետոնե հարթակի 132 քմ և սպասասրահի 6.0 քմ կառուցում

Վերին Բազմաբերդ

- 4 մեծ աղբամանների տեղադրում
- Զրուցարանի կառուցում
- Մշակույթի տանը կից կառույցի՝ 50 քմ թոնրատուն-խոհանոցի կառուցում

Ներքին Բազմաբերդ

- 4 փոքր աղբամանների տեղադրում
- 2 հատ փայտյա՝ դրսի համար, ներսում 2 հատ 3 տեղանոց, 1 հատ 2 տեղանող, 2 հատ փայտյա նստարանների տեղադրում
- Փողոցային լուսավորության 150 հատ լեդ լամպերի փոխարինում
- Ներհամայնքային ճանապարների ավազ, խճաքար 3կմ փոսալցում
- Բժշկական ամբուլատորիա ՀՈԱԿ-ի շենքի Կոսմետիկ վերանորագում
- Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու բակի հարդարման աշխատանքներ
- Այգու նորոգում

Նոր Արթիկ

- 3 մեծ, 4 փոքր աղբամանների տեղադրում
- Վարչական ղեկավարի նստավայրի հատակի բետոնե հարթեցում և սալիկապատում, մուտքի դռան տեղադրում, 6 պատուհանի շերտավարագույրների տեղադրում

Վերին Սասնաշեն

- 2 փոքր, 1 միջին չափերի աղբամանների տեղադրում
- 15 հատ փողոցային լեդ լամպերի վերանորոգում
- 3 հատ նստարաների տեղադրում
- 100 մ ներքին ցանցի ջրագծի հիմնանորոգում նոր խողովակաշարի տեղադրումով և բաժանարար հանգույցներով

Դավթաշեն

- Կենցաղի տան կոյուղու անցկացում, բակային հատվածի բարեկարգում
- Բուժկետի կոսմետիկ նորոգում , խմելաջրի կետի ավելուցում
- Վարչական շենքի բակային տարածքի բարեկարգում
- 10-րդ փողոց մի մասի հարթեցում ավազային հիմքով
- Մանկապարտեզի տարածքի ցանկապատում 100մ, ճաշասենյակի և խաղասենյակի հատակի փոխարինում լամինատով և լինոլյումով

Իրինդ

- Հուշարձանի տարածքում 2 աղբամանների և 2 նստարանների տեղադրում
- Մշակույթի տան բեմի կահավորում, գույքի տրամադրում
- Հուշարձանի աստիճանների վերանորոգում՝ բազալտե սալիկապատում
- Վարչական ղեկավարի նստավայրի գլխավոր մուտքի դռան փոխարինում նորով
- Մանկապարտեզի մասնակի վերանորոգում, մառանի առանձին հատվածի կառուցում
- Բնակավայրի կենտրոնական մասում տաղավարի կառուցում երկաթյա կոնստրուկցիաներով
- Ոռոգման ցանցի 2000 մետր հատվածի երկաթյա և պլաստմասե խողովակների տեղադրում, ջրթողերի պատրաստում

Հացաշեն

- 65 մեծ աղբամանների տեղադրում
- Մշակույթի տան հատակի բետոնե հարթեցում /վինիլային հատակ/, նոր մեծ դռների դեղադրում՝ 3 հատ, դռների վրա պաշտպանիչ շերտի կառուցում

- Մշակույթի տան բազալտե սալիկապատում, սվաղ, ներկում
- Վարչական ղեկավարի նստավայրի սվաղ, երկաթե դարպասների պատրաստում և տեղադրում
- Մանկապարտեզի մասնակի վերանորոգում
- Խմելաջրի ջրագծի 1050 մետր հատվածի վերանորոգում՝ նոր խողովակաշարի տեղադրում բաժանարար հանգույցներով
- Ոռոգման ցանցի 800 մետր հատվածի անցկացում՝ երկաթյա կիսախողովակների տեղադրում, ջրթողների պատրաստում
- 7 աղբամանների տեղադրում, որից 3 մեծ, 4 փոքր
- Դաշտամիջյան ճանապարհների 200 մ հատվածի փոսալցում

Զարինջա

- Մշակույթի տան բեմի վերանորոգում
- Անասունների համար նախատեսված ցանկապատված տարածքի կառուցում
- Գերեզմանատանը կից ծածկված տաղավարի ընդլայնում
- Մշակույթի տան բակում 2 նստարանների տեղադրում
- Բնակավայրի փողոցներում 8 աղբամանների տեղադրում
- Խմելու ջրի ներքին ցանցի ամբողջովին նոր՝ 5 կմ-ից ավել խողովակների անցկացում

Ներքին Սասնաշեն

- 8 հատ մեծ աղբամանների տեղադրում
- Մշակույթի տան մասնակի վերանորոգում՝ կախիչների և վարագույրների տեղադրում/4 հատ/, բեմի շարժական վարագույրի տեղադրում/7,5մ/
- Վարչական շենքի կապիտալ վերանորոգում՝ հատակի բետոնապատում /45քմ/, հատակի սալիկապատում /75քմ/, պատերի սվաղապատում /45քմ/, պատերի և առաստաղի հարթեցում/200քմ/, ներկում /200քմ/, կախովի առաստաղի տեղադրում /40քմ/, դռների փոխարինում/3հ./, պատուհանագոգերի տեղադրում /4հ./, շերտավարագույրների տեղադրում/4հ./, էլ. հոսանքի անցկացում և լուսատուների տեղադրում /8 հ./
- Մանկապարտեզի հատակի մասնակի վերանորոգում՝ 2 ննջասենյակի հատակի լամինատի տեղադրում /75քմ./
- Կոյուղու մասնակի վերանորոգում՝ վերանորոգվել է 50գ/մ կոյուղի՝ նոր խողովակներով
- Խմելաջրի խրամուղու փորում և խողովակների փոխարինում /160գ/մ/
- Սարից իջնող հատվածի խողովակների մաքրում և 35գ/մ խրամուղու փորում
- Գյուղամեջյան հատվածում 3 նստարանների տեղադրում
- Փոխարինվել է փողոցային լուսավորության էլ. լամպեր/50հ./ և լեդ լույսեր/18հ./
- Պուրակում մանրասալիկների /20քմ/ և բետոնե եզրաքարերի տեղադրում /25մ/
- Վերանորոգվել է գերեզմանատան ցանկապատը՝ մետաղացանցով /50գ/մ/, տեղադրվել են մետաղական հենասյուներ /18հ./
- Տեղափոխվել է 80խմ ավազ, և իրականացվել է ճանապարհների փոսալցում

Աշնակ

- Մանկապարտեզի խմելու ջրի 520 մ խողովակի փոխարինում նորով
- 500 մ փակ ոռոգման ցանցի անցկացում
- Հանդիսությունների սրահի գույքի ձեռքբերում՝ սառնարան, ափսե, դանակ, բաժակ, սառցախցիկ
- 1300 մետր ճանապարհի ասֆալտապատում և կահավորում
- Դպրոցի տարածքի ճակատային մասով դեպի ճանապարհ ցանկապատի փոխարինում

Պարտիզակ

Լուսակն

- Բնակավայրի մուտքի մոտ 1 լուսասյան և 3 ծողանի լեդերի տեղադրում
- Կենցաղի տան արտաքին պատերի ամրացում, հարթեցում, ներկում, ջրահեռացման խողովակների հիմնանորոգում
- Բնակավայրի մուտքի և 2-րդ փողոցի բարեկարգում, քարակույտի և աղբի հեռացում
- Դաշտամիջյան ճանապարհների հարթեցում, 6.7 կմ դաշտամիջյան ճանապարհահատվածի փոսալցում
- Բնակավայրի 4-րդ փողոցի ոռոգման փակ ցանցի 76 գծամետրի արդիականացում

Դաշտադեմ

- 3 հատ մեծ աղբամանների տեղադրում
- Խաղասենյակի համալրում 2 հատ նարդի-շախմատով
- 70 մ երկարությամբ ոռոգման ցանցի անցկացում
- Գրադարանի պատերի, առաստաղի, հատակի, դարակաշարերի ներկում
- Բնակավայր մտնող 30 մ երկարությամբ սելավատարի մաքրում
- Նոր՝ 700 մ երկարությամբ սելավատարի կառուցում հատուկ տեղնիկայով
- Մանկապարտեզի խաղասենյակի, պահեստի և խոհանոցի կոսմետիկ վերանորոգում
- Մանկապարտեզի 6 պատուհանների փոխարինում նորերով
- Եկեղեցու շուրջը 6 հատ գիշերային լուսատուների տեղադրում իրենց հենասյուներով
- Զրուցարանի բաց հատվածի թիթեղով ծածկում 7.2 մ/ք
- Փողոցային 70 հատ լուսատուների փոխարինում
- Խմելաջրի 2 հատ հաշվիչների փոխարինում
- Գերեզմանատան համար ձեռք են բերվել 4 բահ, 1 քլունգ, 1 ծանրամուրճ
- Մանկապարտեզում ավելացվել են ջեռուցման 6 կետ /60 սեկցիա/

Արտենի

- Գյուղամիջյան՝ 5 կմ և դաշտամիջյան 9.5 կմ ճանապարհների հարթեցում, փոսալցում
- Եռահարկ շենքերի մուտքերի դռների՝ 10 դուռ և պատուհանների՝ 20 պատուհան փոխարինում նորով
- Մշակույթի տան արևային պանելների տեղադրում
- Վարչական ղեկավարի նստավայրի մուտքի դռան տեղադրում
- Տաղավարի տեղադրում
- Նոր խողովակաշարի տեղադրում բաժանարար հանգույցներով՝ 9.5 կմ
- 700 մ և հրապարակի ասֆալտապատում

Շղարշիկ

- Մանկապարտեզի բակի խաղահրապարակի կառուցում, սալիկապատում, ցանկապատի կառուցում
- Վարչական ղեկավարի նսավայրի, աստիճանների բարեկարգում
- Ոռոգման ցանցի 270 մետր հատվածի անցակացում

Գնումների բաժին

Գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած գնման հայտերի հիման վրա կազմակերպվել է էլեկտրոնային մրցույթներ armeps.am համակարգով.

համայնքապետարանի կարիքների համար և թղթային մրցույթներ www.procurement.am-ում հրապարակելով համայինքի ենթակայության ՀՈԱԿ-ների համար:

- Կազմակերպվել է ավելի քան 173 մրցույթ տարբեր ընթացակարգերով՝ գնանշման հարցման, էլեկտրոնային աճուրդ, բաց և հրատապ բաց մրցույթ և 158 մեկ անձից գնում, 22 գնանշման հարցումով մրցույթ Համայնքային 4 հիմնարկների և մանկապարտեզների սննդի կենտրոնացված գնումը:
- Ամփոփվել և պայմանագիր է կնքվել 141 մրցույթների արդյունքում, որոնց մասին գնահատող հանձնաժողովի որոշումները, գնահատող հանձնաժողովի անդամների շահերի բախման բացակայության մասին, պայմանագիր կնքելու մասին, կնքված պայմանագրի մասին և կնքվելիք պայմանագրի իրական շահառուների տվյալների մասին հայտարարությունները հրապարակվել է լիազոր մարմնի www.procurement.am կայք էջում: Հայտարարված մրցույթներից 32-ը համարվել է չկայացած, հիմնականում մասնակից չլինելու պատճառով, որոնց համար լիազոր մարմնի կայք էջում հրապարակվել է Չկայացած ընթացակարգի մասին հայտարարություն:
- Կնքված պայմանագրերը հրապարակվել է նաև Թալինի համայնքապետարանի կայք էջում:
- Պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար համայնքի ղեկավարի որոշմամբ միակողմանի լուծարվել է 2 պայմանագիր, որոնց վերաբերյալ պայմանագրերի կողմ հանդիսացող կազմակերպությունների էլեկտրոնային հասցեներով ուղարկվել և www.procurement.am կայքում հրապարակվել է ծանուցումներ պայմանագիրը լուծարելու մասին, կազմակերպվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու 4 ընթացակարգ,
- Գնումների բաժինը ապահովելով գնումների թափանցիկությունն ու համայնքի միջոցների խնայողությունը միայն սուբվենցիոն 6 ծրագրերի համար հայտարարված մրցույթների արդյունքում համայնքային և պետական բյուջեների մասով տնտեսվել է 722 131 092 ՀՀ դրամ շինարարական աշխատանքների, 29 914 490 ՀՀ դրամ դրանց սպասարկելու համար մատուցվեղ ծառայությունների արդյունքում:

- **II. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏԿԵՐԸ**
  Սուբվենցիոն ծրագիր

	նախահաշվային արժեքը	պայմանագրերի արժեքը	Համայնքի մասնաբաժին	Սուբվենցիոն հատկացում	խնայողություն
քանակը	գումարը		գումարը	գումարը	
6/12	**3 336 242 664**	**2 614 111 572**	**1 175 500 423**	**1 438 611 149**	**722 131 092**
6/10	**52 744 590**	**22 830 100**	**3 351 870**	**3 256 230**	**29 914 490**
6/9	**18 531 375**	**18 531 375**	**659 842**	**1 468 301**	**0**

Համայնքային միջոցներ

Ապրանք		

քանակ	նախահաշվային արժեքը	պայմանագրերի արժեքը	խնայողություն
74	**313 922 285**	**249.723.650**	**63.468.634**

Ծառայություն			
քանակ	նախահաշվային արժեքը	պայմանագրերի արժեքը	խնայողություն
30	**81 234 043**	**74.454.298**	**6 779 745**

Աշխատանք			
քանակ	նախահաշվային արժեքը	պայմանագրերի արժեքը	խնայողություն
24	**168 927 236**	**135 264 616**	**33 662 620**

Միայն համայնքային միջոցներով հայտարարվել է 24 տարբեր ընթացակարգերով շինարարական աշխատանքների մրցույթներ, որոնց արդյունքում կատարվել է 168 927 236 ՀՀ դրամի նախահաշվային արժեքով շինարարական աշխատանքներ խնայելով 33 662 620ՀՀ դրամ:

Վերը նշված տվյալները արտացոլված են armeps.am, https://www.armeps.am/ppcm. www.procurement.am, talin.am կայքերում:

Ներկայումս 2026թ-ի համար կազմակերպվել է Համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզների սննդի կենտրոնացված գնում, որը մինչև հունվարի 1-ին աշխատանքային օրը ամփոփված կլինի: Հայտարարված է Ինտերնետ ծառայության 2026թ-ի մրցույթը, 2026թ-ի սուբվենցիոն ծրագրերի համար գազի /Զովասար, Կարմրաշեն Ն. Սասնաշեն, Ոսկեթաս,Վ.Բազմաբերդ/, ջրի /Աշնակ Դավթաշեն, Գառնահովիտ/, ասֆալտապատման /Զարինջա,Հացաշեն,Ն.Արթիկ,Սուսեր,Ցամաքասար,Մաստարա, Կաթնաղբյուր,Դավթաշեն, Գառնահովիտ, Ագարակավան, Ն.Բազմաբերդ, Արագածավան, Թաթուլ, Դաշտադեմ/ աշխատանքների նախագծման մրցույթները:

Կազմակերպվել է 2026թ-ի «Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություն» համայնքային հիմնարկի համար 2026թ-ի աղբահանության ծառայությունների մրցույթը, Համայնքային Հիմնարկների 2026թ-ի Դիզ Վառելիքի, Բենզինի և սեղմված բնական գազի մրցույթները:

Իրավաբանական բաժին

2025 թվականի ընթացքում Թալինի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնում հարուցվել է **343** վարչական վարույթ /**2024**թ.՝ **222**, աճ **121** կամ **54,5** տոկոս/ անշարժ գույքի և փոխադրամիջոցի **49.153.779** ՀՀ դրամ չափով չկատարված հարկային պարտավորությունների փաստով/ **2024**թ՝ **23.122.594,** աճ **26.031.185** դրամ կամ **112,6** տոկոս/

Կայացվել է **294** գանձման որոշում/**2024**թ՝ **221**, աճ **73** /, **177** վարչական վարույթ կարճվել է՝ պարտավորությունները կատարելու հիմքով /**2024թ՝ 81,** աճ **96**/ :

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում հարուցված վարչական վարույթներով/ ներառյալ ՀՀ ԱՆ ՀԿԾ/ գանձվել է **30.663.520** ՀՀ դրամ / **2024թ.՝17.444.266** դր, աճ **13.219.254** դրամ կամ **75.8** տոկոս/, որից՝ **20.908.604** դրամ վարույթի ընթացքում/ **2024թ՝ 5.305.235** դրամ, աճ **15.603.365** դրամ կամ **294** տոկոս/, **9.754.916** դրամ գանձման

որոշումների հիման վրա՝ ՀԿ ծառայության կողմից /**2024թ.՝12.139.031** դրամ, նվազում **2.384.115** դրամ կամ **19,6** տոկոս/:

Հարուցվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի **9** վարույթ՝4-ը ՎԻՎ օրի 54 հոդվածի 1-ին մաս, 3-ը՝ 43.1 հոդվածի 3 մասի 10-րդ կետ, 2-ը՝ 154 հոդվածի 2 մաս/**2024թ՝ 5**/, արդյունքում կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին **9** որոշում **660.000** ՀՀ դրամ գումարի չափով,որից գանձված է **640.000** ՀՀ դրամ:

Դատարանի վարույթում գտնվող քաղաքացիական գործերի շրջանակներում /Ճանապարհային դեպարտամենտ/ հօգուտ համայնքի բյուջե գանձվել է **500.546** ՀՀ դրամ:

ՀՀ սնանկության դատարան ներկայացվել են **5** սնանկության գործով պահանջ՝ **2.226.554** ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Ներկայացված պահանջներով գանձում չի եղել:

Հաշվետու տարում իրավաբանական բաժնի կողմից տարված աշխատանքների արդյունքում գանձվել է **31.303.520** ՀՀ դրամ գումար:

Ժամկետների սահմաններում ընթացք է տրվել պետական մարմիններից, փաստաբաններից, դատարաններից ստացված **641** գրությունների:

Սահմանված կարգով քննարկվել և ընթացք է տրվել քաղաքացիների կողմից ներկայացված **37** դիմում–բողոքների, բոլորին տրվել են սպառիչ պատասխաններ, արդյունքները զեկուցվել ղեկավարությանը:

Իրավաբանական բաժնի ծառայողները մասնակցել են **38** դատական նիստերի՝ Վարչական, քաղաքացիական, սնանկության և խնամակալության գործերով: Իրավաբանական բաժնի ծառայողի կողմից սոցիալական աջակցության և առողջապահության հարցերով բաժնի հետ համատեղ իրականացվել են տնայցեր, համայնքում հայտնաբերվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անչափահասներ, կարգավորվել են երեխաների հետ կապված մի շարք խնդիրներ, **7** երեխաներ կենսաբանական ընտանիքից տեղափոխվել են համապատասխան խնամքի կենտրոններ, երկու երեխա ճանաչվել է որպես առանց ծնողական խնամքի մնացած և հաշվառվել սոց.նախարարությունում: Ծնողական իրավունքները սահմանափակելու վերաբերյալ 1 հայցադիմում է ներկայացվել դատարան:

Համայնքի **92** բնակիչներ դիմել են իրավաբանական բաժին և ստացել անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն:

Բաժնի ծառայողների կողմից կազմակերպվել է Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 8 անշարժ գույքի և 3 համայնքների/Իրինդ,Եղնիկ,Զովասար/ գազատար խողովակների անհատույց օգտագործման իրավունքով համապատասխան հիմնարկներին տրամադրելու գործընթացը և անհրաժեշտ իրավական ձևակերպումները: Կազմակերպվել է ՀՀ ՊԵԿ-ում Թալին համայնքին նվիրաբերած գույքերի մաքսազերծման և տեղափոխման աշխատանքները: Բաժնի աշխատակիցները մասնակցություն են ունեցել նաև համայնքի մանկապարտեզների լիցենզավորման համար ձեռնարկված գործընթացին:

Եզրակացություններ են տրվել համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից ներկայացված զեկուցագրերին:

Ուսումնասիրվել են թվով **189** իրավական ակտերի նախագծերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը և ներկայացվել համապատասխան եզրակացություններ:

Հաշվետու տարվա ընթացքում իրավաբանական բաժնում թափուր հաստիքներ չեն եղել: Բաժնի ծառայողների կողմից գործառութային պարտականությունների և կատարողական կարգապահության էական խախտումներ չեն արձանագրվել:Վերապատրաստվել և համապատասխան հավաստագրեր են ստացել 2 ծառայողներ՝բաժնի պետը և գլխավոր մասնագետը:

Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին

Թալին համայնքում գործող 13 մանկապարտեզներ և 3 մասնաճյուղեր համալրվել են անհրաժեշտ գույքով, տնտեսական և գրենական պարագաներով: Որոշ մանկապարտեզներում կատարվել են վերանորոգման աշխատանքներ: Հիմնանորոգվում են Թալինի թիվ 2 և Կաթնաղբյուրի մանկապարտեզները: Ոսկեթաս և Կաքավաձոր բնակավայրերում կառուցվում են նոր մանկապարտեզներ: Համակարգվել է մանկապարտեզների լիցենզիաների ձեռք բերման գործընթացը՝ 12 մանկապարտեզներ լիցենզավորված են:

Թալինի համայնքապետարանի ենթակայությամբ գործող կրթամշակութային ՀՈԱԿ-ների կողմից ծառայություններ ստացողների ընդհանուր քանակը կազմում է 1427, որից՝

- «Թալինի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ – 110
- «Արագածավանի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-70
- «Թալինի համայնքային մշակութային կենտրոն» ՀՈԱԿ – 270
- «Թալինի մանկական գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ– 98
- «Թալինի համայնքային մարզական կենտրոն» ՀՈԱԿ-130
- Մանկապարտեզներ – 749

Կազմակերպվել է «Թալինի և Արագածավանի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ների, «Թալինի մանկական գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի, «Թալինի համայնքային մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի և մանկապարտեզների սաների մասնակցությունը տարբեր մշակութային միջոցառումներին:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մասնակի վերանորոգվել են մշակույթի կենտրոններ,համալրվել անհրաժեշտ գույքով:

2025 թվականին անցկացված միջոցառումները՝

1. Հունվարի 28 /Հայոց բանակի կազմավորման օր/

2. Մարտի 8 /Կանանց միջազգային օր/

3. Թալինի օր

4. Քաղաքացու օր

5. Բուրգ-լե Վալանս քաղաքի պատվիրակության դիմավորում մշակութային միջոցառմամբ

7.Վարդավառ

6. Անկախության օրվան նվիրված միջոցառում

7. Եվրոպական ժառանգության օրվան նվիրված միջոցառում

8. Ուսուցչի օրվան նվիրված միջոցառում

9. Յունեսկոյի «Ոչ նյութական ժառանգության օրեր» միջոցառում Իրինդ բնակավայրում:

10. Ամանորյա միջոցառումներ Թալին քաղաքում,Արագածավան, Արտենի ,Մաստարա և Ներքին Բազմաբերդ բնակավայրերում:

ՍՊՈՐՏ

Տարվա ընթացքում <<Թալինի Գարեգին Ավդալյանի անվան մարզական կենտրոնը>> համալրվել է մարզական գույքով ,կազմակերպվել է մարզական կենտրոնի սաների մասնակցությունը հանրապետական և միջհամայնքային տարաբնույթ սպորտային առաջնություններին:

Կազմակերպվել և անցկացվել են ներհամայնքային մի շարք սպորտային միջոցառումներ.

1.Փետրվարի 1-7-ը ապահովվել է մարզիկ մարզուհիների մասնակցությունը Ջերմուկ քաղաքում կայացած Համահայկական ձմեռային խաղերին:

Անցկացվել է .

2. Անդրանիկ Մանուկյանի անվան վոլեյբոլի ներհամայնքային հուշամրցաշար:

3.Գառնիկ Առաքելյանի անվան ֆուտբոլի մանկապատանեկան միջհամայնքային հուշամրցաշար :

4.Կարեն Սարգսյանի անվան սեղանի թենիսի ներհամայնքային առաջնություն:

5.Արորիկ Հովհաննիսյանի անվան շախմատի ներհամայնքային հուշամրցաշար:

6.Մկրտիչ Հարությունյանի անվան ֆուտբոլի ներհամայնքային հուշամրցաշար:

Հաջողություններ գրանցած մարզիկները պարգևատրվել են պատվոգրերով ,խրախուսական նվերներով և դրամական պարգևներով՝ 1.500.000 ՀՀ դրամի չափով:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ողջ տարվա ընթացքում ուշադրության կենտրոնում են եղել երիտասարդների հետ կապված տարաբնույթ խնդիրներ:

Նշվել է «Երիտասարդության օրը» համայնքի առաջադեմ երիտասարդների մասնակցությամբ:

Հակոբյաններ համահայկական հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է համայնքի դպրոցներում սովորող գերազանց առաջադիմությամբ սովորողների հանգստի կազմակերպումը Դուբայ քաղաքում

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

«Թալինի համայնքային կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի 16 գրադարաններում կատարվել է գրքի ֆոնդի ավելացում,գույքի ձեռք բերում:

Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին

2025 թ-ին կատարվել են՝
1.Սոցիալական աջակցության կարիք ունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և սոցիալապես անապահով անձանց, ծերերին, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, զոհված, վիրավոր զինծառայողների ընտանիքներին(թվով 300 շահառուների) ցուցաբերվել է 25.000.000(քսանհինգ միլիոն)ՀՀ դրամ աջակցություն,որից 1.540.000(մեկ միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ ուսման վարձի մասնակի փոխհատուցում, 6.298.000(վեց միլիոն երկու հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ՝ առողջապահական խնդիրների լուծման մասնակի փոխհատուցում, 4.000.000(չորս միլիոն)ՀՀ դրամ՝ 2025թ. հունիսի 30-ին տեղի ունեցած ուժգին քամու պատճառած վնասների մասնակի փոխհատուցում: Կատարվել են շուրջ 280 տնայցեր՝ շահառուների կենսապայմանների գնահատման նպատակով:
2.Հավաքագրվել են փաստաթղթեր զոհված զինծառայողների ընտանիքների բնակարանների ձեռքբերման համար:

3.Կատարվել է քաղաքացիների հաշվառում, ովքեր դիմել են բնակարանային պայմանների բարելավման համար:
4.Թալինի համայնքապետարանի Խնամակալության և Հոգաբարձության մարմնին կից գործող Խնամակալության և Հոգաբարձության հանձնաժողովը 2025 թ.-ին կայացրել է թվով 8 եզրակացություն՝ բնակության վայր և տեսակցություն սահմանելու վերաբերյալ, 3 որոշում՝ գույքի օտարման թույլտվության վերաբերյալ, 1 որոշում՝ խնամքի կենտրոն տեղավորելու վերաբերյալ, որոշում՝ ԱԾԽՄ ճանաչելու վերաբերյալ, 1 որոշում՝ գույքի ձեռքբերման և գրավադրման վերաբերյալ:
5.Արցախից տաղահանված 102 ընտանիքիների հաշվառում, տնայցեր, տարատեսակ աջակցությյուններ՝ համայնքի, «Պարենի համաշխարհային ծրագրի», «Շեն» ԲՀԿ-ի, <<Առաքելություն Հայաստան>> ՀԿ-ի կողմից:
6.<<Աղբյուր>> ճամբար Ծաղկաձորում՝ 7-13տ. զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների երեխաների 20-օրյա հանգստի կազմակերպում:
7.Համայնքապետի որոշմամբ ստեղծվել է Թալին համայնքի գենդերային քաղաքականության իրականացման և գենդերային բռնության դեմ պայքարի հարցերով խորհուրդ, որի հետ համատեղ կազմակերպվել են գենդերային քաղաքականությանը վերաբերող դասընթացներ և միջոցառումներ:
8. Բոլոր առողջապահական ՀՈԱԿ-ներում կատարվել է խնդիրների գույքագրում, և դրանց տրվել են լուծումներ.

- Ն. Բազմաբերդի բուժ. ամբուլատորիային հատկացվել է 1 600 000(մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ
- Արագածավանի առողջության կենտրոնին հատկացվել է 1 100 000(մեկ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ
- Մաստարայի բուժ. ամբուլատորիային հատկացվել է 900 000(ինը հարյուր հազար) ՀՀ դրամ

Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին

Բաժինը 2025 թվականի ընթացքում, ըստ աշխատանքային ծրագրի, իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. **Բուսաբուծության ոլորտ**
    - Կազմակերպել է համայնքում գյուղատնտեսական մշակաբույսերի գարնանացանի և աշնանացանի բերքահավաքի աշխատանքները: Իրականացրել է բազմաթիվ մարքեթինգային միջոցառումներ, որի արդյունքում գյուղացիական տնտեսությունների բացարձակ մեծամասնությունը գարնանային և աշնանային ցանքերը իրականացրել է բարձր վերարտադրողական սերմացուներով:
    - Կազմակերպել և իրականացրել է ՀՀ կառավարության կողմից հաստատված «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի ծրագիրը», որի արդյունքում համայնքի 440 շահառու ֆերմերներ իրականացրել են 2488 հա գարնանացան գարու, առվույտի և կորնգանի ցանքեր: Ծրագրի շրջանակում բաժինն իրականացրել է համապատասխան մոնիթորինգ, որի արդյունքում գյուղացիական տնտեսությունները ստանալու են 178793 հազար ՀՀ դրամ փոխհատուցում: Որպես մոնիթորինգային ծառայության վճար, համայնքային բյուջե է փոխանցվելու 5363,8 հազար ՀՀ դրամ:

- Կազմակերպել է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքներ:
- Բաժինը, համագործակցելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ, և՛ գարնանը, և՛ աշնանը կազմակերպել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ: Ընդ որում, գարնանը գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 104 լ Բրոմոդիլ թունանյութ 1300 հա-ի համար, իսկ ամառվա վերջին՝ 58,4 լ 730 հա-ի համար: Մեր կողմից կազմակերպվել է այցելություններ բնակավայրեր, գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն գրավչանյութի ճիշտ պատրաստման և կիրառման վերաբերյալ:

2. Հողօգտագործություն

- Համայնքում, ըստ վարչական բնակավայրերի, ուսումնասիրվել է համայնքային սեփականության հողատարածքների վարձակալության տրամադրման վիճակը: 2025 թվականի ընթացքում կնքվել է կարճաժամկետ 345 պայմանագիր 299,28 հա հողատարածքի համար, որի վարձավճարի չափը կազմել է 4585,4 հազար ՀՀ դրամ: Աշխատանքներն այս ուղղությամբ շարունակվում են:
- Բաժինն ուսումնասիրել և քննարկել է հողերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ գյուղացիական տնտեսություններից ստացված դիմումները: Ընդ որում, 2025 թվականի ընթացքում կազմվել է համայնքի ղեկավարի 49 որոշում՝ հողերի գործառնական նշանակության փոփոխման վերաբերյալ:
- 2025 թվականին կատարվել է համայնքի վարչական տարածքում գտնվող պետական և համայնքային արոտավայրերի վիճակի վերաբերյալ ուսումնասիրություններ: Կարճաժամկետ վարձակալությամբ տրամադրվել է պետական սեփականության արոտավայրերից 4477 հա, կնքվել է 26 պայմանագիր, որի վարձավճարի չափը կազմել է 8110 հազար ՀՀ դրամ: Համայնքային սեփականության արոտավայրից վարձակալությամբ տրամադրվել է 1081 հա, կնքվել է 10 պայմանագիր, որոնց վարձավճարի չափը կազմել է 1365 հազար դրամ:

3. Անասնաբուծություն

- 2025 թվականին բաժինը կազմակերպել է համայնքում բազմաթիվ հակահամաճարակային միջոցառումներ՝ վերահսկողություն սահմանելով գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների վրա:
- Համայնքի 32 վարչական բնակավայրերը և Թալին քաղաքը սպասարկում են 16 անասնաբույժներ:
- Անասնաբույժների միջոցով կազմակերպվել է անասունների ամենամյա հաշվառում , որի արդյունքում 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում առկա է 13058 գլուխ ԽԵԿ, որից՝ 6233 կով, 28487 գլուխ ՄԵԿ, 4773 խոզ և 37358 թռչուն:
- Գյուղացիական տնտեսություններին տրամադրվել են անասնագլխաքանակի վերաբերյալ 500-ից ավելի տեղեկանքներ՝ սոցիալական նպաստների և տարբեր գործարքների պահանջի վերաբերյալ:
- Գյուղացիական տնտեսություններին է տրամադրվել անասնաբուժական N1 ձևի 560 տեղեկանքներ՝ սպանդանոցային մորթի կիրառման նպատակով:

- Վերահսկողություն է սահմանվել նաև բնակավայրերում անասնագլխաքանակի հաշվառման և համարակալման գործընթացում:
- Համայնքի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժինը վերահսկողություն է սահմանել վարչական բնակավայրերում իրականացվող անասնաբուժական պետական պատվիրակված ծառայությունների նկատմամբ, որի հաջող իրականացման նպատակով ցուցաբերվել է անհրաժեշտ օգնություն «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետներին (որոնց մեծ մասը նաև համայնքային անասնաբույժներ են)՝ միջոցառումները ժամանակին և պատշաճ կազմակերպելու նպատակով:

4. **Բնապահպանություն**
    - Համայնքը առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է պահում բնապահպանական խնդիրները: Համայնքում գործող ոչ մետաղական հանքերի նորմալ շահագործման նպատակով պարբերաբար կազմակերպվել են այցելություններ՝ արձանագրելով առկա խնդիրները և դրանց լուծման նպատակով մշակվել են համապատասխան միջոցառումների պլան-ժամանակացույց:
5. **Գյուղատնտեսական խորհրդատվություն**

- Գյուղատնտեսության և բնապահպանության բաժինը տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպել է իրազեկման արշավներ վարչական բնակավայրերի գյուղացիական տնտեսություններին ներկայացնելով ՀՀ կառավարության կողմից հաստատված գյուղատնտեսական ոլորտի պետական օժանդակության ծրագրերը՝ մասնավորապես «Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028 թթ. ծրագիրը», «Մթերատվության բարձրացման փորձնական ծրագիրը», «Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագիրը», «Բուսաբուծության աջակցության 2025 թ ծրագիրը», «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիրը», «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիրը», «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագիրը և այլն:

    - Բաժնի մասնագետներն ամենօրյա ռեժիմով կազմակերպում են քաղաքացիների ընդունելիություն բաժնում՝ մասնագիտական խորհրդատվության և ոլորտին վերաբերվող տարբեր հարցերի պարզաբանման նպատակով: